ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին, Գայի -1.
Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel. 060-75-77-87
E-mail : talinihamaynqapetaran@list.ru

№ 056/24/18

27 06 2024թ.

«ԿԱՄԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Սամվել Աշոտի Զաքարյանին

Հարգելի պարոն Զաքարյան,

Թալին համայնքի կարիքների համար ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՊՁԲ-24/59 ծածկագրով գնման ընթացակարգի Ձեր ներկայացրած մասնակցության հայտը պետական վերահսկողության ծառայության կողմից կատարված վերլուծության արդյունքում պարզվել է, որ Դուք մասնակցության հայտ ներկայացնելու իրավասություն չունեիք, քանի որ Կամար Գրուպ ՍՊԸ-ի և Զաքարյան Շին ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն:

Տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01329251) 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի՝ 2023 թվականի մարտի 20-ից «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն է հանդիսանում Սամվել Աշոտի Զաքարյանը:

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01329251) 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանի և «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն,

2022 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև օրս հանդիսանում է նաև «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն:

Այսպես՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**: ...:»

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի: (...)

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)***

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով որոշում է կայացվել **«Կամար Գրուպ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 013355463) (այսուհետ՝ Ընկերություն)** հայտը համարել անբավարար **և տվյալները ներկայացնել լիազոր մարմին** գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հարգանքով՝

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ս. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատարող՝ Աղավնի Հովհաննիսյան
Հեռ՝ +37493 637127